

Վերամուտ ՀՀԴ Գանատայի Պատանեկան Միութեան

Աւելի քան 150 պատանիներ՝ Լաւալի, Սոնթրեալի եւ Թորոնթոյի մէջ, սկսան իրենց 2009-2010 տարեշրջանի գործունեութեան:

ՀՀԴ Գանատայի Պատանեկան Միութեան Ընդհանուր Վարիչ Մարմինը կազմակերպած էր Քեպէգի եւ Օնթարիոյի շրջաններուն մէջ վերամուտի հանդիպումներ՝ պատանիներուն եւ անոնց ծնողներուն հետ, Յոկտեմբեր 9-10 շաբաթավերջին:

Ընդհանուր վարիչ մարմինը (ԸՎՄ) այս առթիւ փոխանցեց պատանիներուն 2009-2010 տարեշրջանի գործունեութիւնը եւ յատկանշական ծրագիրները: Ինչպէս, հայ պատանիին դաստիարակչական ծրագիրը՝ ազգային եւ մշակութային հարուստ գիտելիքներով, համագանատական տարեկան սեմինարը, մասնակցութիւն ԱՄՆ Արեւելեան շրջանի պատանեկան սեմինարին որ տեղի կ'ունենայ Ֆիլատելֆիոյ մէջ, Հայաստանագնացութիւն 2010 (Յուլիս 16-30), եւ այլ աշխատանքներ եւ զուարճալի անակնկալներ որոնք կը նպաստեն պատանիին ընձեռեցիլու հաճելի եւ ընկերային մթնոլորտ մը:

Օնթարիոյի Գեմպրիճ, Համիլթըն եւ Սէնթ Գաթրինզ շրջաններու վերամուտը տեղի պիտի ունենայ ամսուան վերջաւորութեան: Մանրամասնութիւններու համար կրնաք կապուիլ ԸՎՄ-ին եւ կամ տեղւոյն մասնաճիւղերուն հետ:

Այն ծնողները, որոնք կը փափաքին իրենց 8-16 տարեկան զաւակները արձանագրել, կրնան կապ պահել շրջանի մասնաճիւղերուն հետ:

ՀՀԴ ԳԱՆԱՏԱՅԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ